

Հաստատում եմ՝

«Երևանի պետական համալսարան»
հիմնադրամի կառավարիչ-ընկառոր,

ՀՀ ԳԱՍ ակադեմիկոս

Գ. Գ. Գևորգյան

10 հուլիսի 2020 թ.



ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.01 «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար Հրայա Վաղարշակի Արզումանյանի «Քաղաքագիտական-աստվածաբանական տեղաշարժի հարացույցը ազգային անվտանգության տեսության զարգացման մեջ» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հրայա Արզումանյանի «Քաղաքագիտական-աստվածաբանական տեղաշարժի հարացույցը ազգային անվտանգության տեսության զարգացման մեջ» թեմայով ատենախոսությունը նվիրված է ժամանակակից քաղաքական գիտության արդիական թեմաներից մեկին: Հեղինակը ժամանակակից անվտանգության միջավայրի գործընթացները վերլուծելու և քննարկելու նպատակով մշակում է համապատասխան հարացույցի հիմնական սկզբունքները և հասկացութային-կատեգորիալ ապարատը, ներկայացնում բարդ մտածողության, բարդության փիլիսոփայության, ցանցակենտրոն հայեցակարգերի սկզբունքների և մեթոդաբանական հիմքերի կիրառման տեսական հիմնավորումը:

Մի շարք նախանշաններ վկայում են հարացուցային այնպիսի ճգնաժամի աճի մասին, որը չի կարող հաղթահարվել ապագայնության հարացույցի շրջանակում: Այն պահանջում է նորի մշակում, որի կատեգորիալ տարածությունը թույլ կտա ընդգրկել անվտանգության միջավայրում և համաշխարհային քաղաքական համակարգում դիտարկվող երևույթների և գործընթացների մեծ մասը:

Ատենախոսությունում առկա է երկու բևեռային հայացքների՝ կենտրոնացած և կանոնավոր, և ապակենտրոնացված և անկանոն մոտեցումների սինթեզի անհրաժեշտության տեսական և մեթոդական դիրքորոշումը: «Կանոնավորություն-անկանոնություն» և «զծայնություն-ապագծայնություն» հասկացությունների զույգերով ձևավորված մոտեցումների համադրման և ներգրավման և իշխանության բևեռների ձևավորման գիտական խնդիրը իրականացվում է ապագծային հարացույցի համատեքստում: Խնդիրը լուծվում է նոր հարացույցի մշակման գործընթացում, որի կատեգորիալ տարածքը եռաչափ է և ձևավորվում է երեք զույգ հասկացությունների և ձգողության բևեռների կողմից՝ «զծայնություն-ապագծայնություն», «կանոնավորություն-անկանոնություն» և «աշխարհիկություն-կրոնականություն»: Գիտական նորույթը քաղաքական և կրոնական հասկացությունների միջև փոխհարաբերությունների կրիտիկական կարևորության տեսական հիմնավորումն, ապագծային տարածվող հարացույցի զարգացումն է:

Ատենախոսության առաջին գլխում՝ մշակվում է նոր՝ ապագծայինից զարգացող հարացույցը, որի հիմնարար սկզբունքներից մեկը պետք է լինի քաղաքական և կրոնական ոլորտների դինամիկական բաղադրումը: Այդպիսի մոտեցման հնարավորությունը և իրավաչափությունը գնահատելու համար կատարվում է արևմտյան աստվածաբանական և քաղաքագիտական դպրոցների, մասնավորապես՝ քաղաքական աստվածաբանության շրջանակում ձեռք բերված արդյունքների քննություն:

Նոր հարացույցը հրաժարվում է քաղաքական և կրոնական գործընթացների անջատ քննությունից և հաշվի է առնում անվտանգության միջավայրի թե՛ զծային և կանոնավոր, և թե՛ ապագծային և անկանոն ասպեկտները: Նոր հարացույցը նպատակադրված է ստանձնել անվտանգության միջավայրի աճող բարդության ըմբռնումը:

Երկրորդ գլխում՝ տրվում են բարդ մտածողության և բարդության գիտության փիլիսոփայական հիմնավորումները: Բարդ մտածողության և բարդության գիտության լայն հենքի մեջ են ներառվում տարբեր տեսանկյուններ և մոտեցումներ, որոնք թույլ են տալիս խոսել էվոյուցիոն փիլիսոփայության մասին, որի շրջանակում ճանաչողության տարբեր մեթոդները «մրցակցային դիմակայության» մեջ են

հայտնվում՝ ուսումնասիրվող երևույթի կամ համակարգի առավել ադեկվատ պատկերացում և ճշգրիտ բացատրություն առաջարկելու համար: Մոցիալական համակարգերն ամբողջապես և մասնավորապես՝ անվտանգության միջավայրը քննելու համար առաջարկվում է օգտագործել ապագծայնության հարացույցի զարգացման արգասիք նոր հարացույցը և բարդ ադապտիվ համակարգերի տեսությունը:

Երրորդ գլխում՝ բարդ մտածողության սկզբունքների, համակարգերի ընդհանուր տեսության և բարդ ադապտիվ համակարգերի տեսության հիման վրա քննվում են գծային և ապագծային հարացույցների կայացման և զարգացման հիմնական փուլերը, ինչպես նաև համաշխարհայնացման գործընթացները և ձևավորվող անվտանգության միջավայրի հիմնական ուրվագծերը: Ապագծայնության հարացույցի հիմնարար դրույթների ձևակերպումը թույլ է տալիս անցնել միջազգային հարաբերությունների, ռազմական ոլորտի և պատերազմի երևույթի քննությանը՝ բարդ ադապտիվ համակարգերի տեսության մեթոդաբանության հիման վրա:

Չորրորդ գլխում՝ ապագծայնության հարացույցի և բարդ ադապտիվ համակարգերի տեսության հիմնարար դրույթների հիման վրա քննվում են անվտանգության միջավայրում ընթացող որակական տեղաշարժերը, որոնք անհրաժեշտ են դարձնում հակամարտության ապագծային մոդելների և ռազմական ոլորտի վերափոխման հայեցակարգի մշակումները: Աշխատանքում համառոտակի քննվում են ցանցակենտրոն պատերազմների տեսության ի հայտ գալուն հանգեցնող աշխարհառազմավարական ու ռազմական համատեքստերը և իշխանության ու հասարակության կառուցվածքում հայտածվող փոփոխությունները: Վերլուծվում են Չլրդ դարի պատերազմի դոմենների հայեցակարգային հիմքը, ցանցակենտրոն պատերազմների տեսության սկզբունքներն ու ղեկավարող կանոնները, ինչպես նաև ցանցակենտրոն գործողությունների հայեցակարգային հիմքը:

Ատենախոսությունում ներկայացված գիտական դրույթներն ու եզրակացությունները հեղինակը աշխատում է հաստատել միջգիտակարգային հայեցակարգային հիմունքների, քաղաքական աստվածաբանության, բարդ մտածողության, բարդության փիլիսոփայության և գիտության հասկացութային-կատեգորիալ ապարատի ու սկզբունքների, համակարգող գիտությունների

տեսագիտական մոդելների, ինչպես նաև բարդ ադապտացվող համակարգերի տեսության և ցանցակենտրոն պատերազմի տեսության մեթոդների կիրառմամբ:

Հրայր Արզումանյանի ատենախոսության մեջ ընդգրկված 4 գլուխներում իրականացված եզրահանգումները ներառված են հեղինակի 52 հիմնական հրապարակումներում Հայաստանի Հանրապետության ԲՈԿ-ի և Ռուսաստանի Դաշնության ԲՈՀ-ի կողմից երաշխավորված գիտական պարբերականներում, ինչպես նաև արտասահմանյան մամուլում: Ատենախոսը վեց մենագրությունների և համահեղինակության կարգով չորս գրքերի հեղինակ է:

Այս ամենի հետ մեկտեղ պետք է նշել առկա որոշ թերությունները՝

1. Ատենախոսության ներածության մեջ բացակայում է թեմայի մշակվածության աստիճանը:

2. Բովանդակությունը խոշորացվելու պահանջ ունի՝ միավորելով որոշ ենթագլուխների ենթակետերը:

3՝ Ատենախոսությունը հագեցված է երկար նախադասություններով, որտեղ օգտագործված են մեծ քանակությամբ քաղաքագիտական և փիլիսոփայական տերմիններ և հասկացություններ, ինչը շատ հաճախ դժվարացնում է դրանց ըմբռնումը, այնինչ բովանդակությունն իրականում շատ պարզ է: Հաճախ շարադրանքի այդ ոճը թերացնում է մտքի տրամաբանական դասավորությունը:

4՝ Ատենախոսության մեջ առկա են տեխնիկական բնույթի թերություններ:

Ընդհանուր առմամբ, ձևի և բովանդակության, սահմանված և լուծված առաջադրանքների համապատասխանության, ինչպես նաև գիտական արդյունքների ամբողջականության առումով այս աշխատանքը հիմնականում համապատասխանում է դոկտորական ատենախոսությունների պահանջներին:

Երևանի պետական համալսարանի «Քաղաքական գիտության պատմության և տեսության» ամբիոնը, որպես առաջատար կազմակերպություն, գտնում է, որ Հրայր Վաղարշակի Արզումանյանի «Քաղաքագիտական-աստվածաբանական տեղաշարժի հարացույցը ազգային անվտանգության տեսության զարգացման մեջ» թեմայով աշխատանքը հիմնականում համապատասխանում է ԻԳ.00.01-«Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճան հայցելու ատենախոսություններին առաջադրվող

պահանջներին, իսկ աստենախոսը, հաջող պաշտպանության դեպքում, արժանի է քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը:

Եզրակացությունը հաստատվել է Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի «Քաղաքական գիտության պատմության և տեսության» ամբիոնի նիստում, կայացած 2020 թ. հուլիսի 6-ին, արձանագրություն 7: Նիստին մասնակցում էին ք.գ.դ., պրոֆ. Ա. Ենգոյանը, փ.գ.դ., պրոֆ. Հ. Մանուչարյանը, փ.գ.թ., դոց. Լ. Վարդանյանը, ք.գ.դ., ք.գ.դ., դոց. Ի. Գալստյանը, ք.գ.թ. Ա. Դավթյանը, ք.գ.թ., դոց. Ա. Գասպարյանը, ք.գ.թ. Ս. Շահգեղյանը, ք.գ.թ. Ա. Սարգսյանը, Խ. Ազատյանը:

Երևանի պետական համալսարանի
Միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի Քաղաքական գիտության
պատմության և տեսության ամբիոնի վարիչ,
քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր



Ա. Փ. Ենգոյան

Քաղ. գիտ. դոկտ., պրոֆ. Ա. Փ. Ենգոյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար
պատմ. գիտ. թեկնածու

Լ. Ս. Հովսեփյան

ք. Երևան

10 հուլիսի 2020 թ.

